

ՍՈՒՐԻ ԽԱԶ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross
Armenian Church

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արք. Մանուկեան

14 Յուլիս 1979

Առաջնորդ եւ

Նախագահ Թեմական Խորհուրդի

Թորոնթօ.

Սրբազան Հայր,

Ձերդ Սրբազնութեան եւ Թեմական Խորհուրդի անդամներուն շնորհակալութիւն կը յայտնենք որ զաղութային խիստ կարեւոր հարցերու վերջնական լուծում մը տալու համար Թորոնթօ եկած էք:

Ըստ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի 2 Ապրիլ 1979 թուակիր եւ 259 թիւ հրահանգին, Ապրիլ 15 էն սկսեալ մեր համայնքի անունով կատարուած պատրագները ժամանակաւոր կերպով դադրեցուցան եւ այս իրողութիւնը 17 Ապրիլին բերանացի ու 8 Մայիսին ալ նամակով մը Առաջնորդական Փոխանորդին տեղեկացուցաւ:

Առաջնորդական Փոխանորդը, 24 Մայիս 1979 թուակիր նամակով մը, 28 Մայիսի մեր հերթական ժողովին ներկայ գտնուելու հրաւիրեցինք: Սոյն ժողովին, Հայր Սուրբը թելադրեց անդամական ժողով գումարել եւ ծխական խորհուրդ ընտրել:

7 Յուլիս 1979 թուականին անդամական ժողով գումարուեցաւ:

Անդամական ժողովին ընտրուեցաւ ծխական Խորհուրդ՝ 13 անձեր - ծխական Խորհուրդը սահմանաքակուեցաւ 13 ըլլալով - Ընտրողական Յանձնախումբ՝ 5 անձեր եւ Հաշուեքննիչ Յանձնախումբ՝ 3 անձեր: Ժողովը որդեգրեց անդամատուրքի դրութիւնը:

Անդամական ժողովի արդիւնքը, 10 Յուլիս 1979 թուակիր նամակով մը, Առաջնորդական Փոխանորդին տեղեկացուցինք:

Մեր հասկացողութիւնը այն է, թէ ծուխի կազմակերպման հիմնական աշխատութիւնները կատարուած է եւ այժմ կը մնայ ծուխի Առաջնորդարանի կողմէ մանաչումը, ծխական Խորհուրդի անձնակազմի վաւերացումը եւ հոգեւոր հովիւի մը նշանակումը:

Ս
ի Դիմաց
Ս. Խաչ Հայր. Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի
Յակոբ Նար
Ատենադպիր
Սոթթ. Ա. Վ. Այնաճեան
Ատենապետ